# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Կուտական համայնքի ղեկավար Աիարոն Աբրահամյանի 2011թ. կատարած աշխատանքների մասին:

Հարգելի համագյուղացիներ, հյուրեր և ավագանու անդամներ Ձեզ եմ ներկայացնում հաշվետվությունը 2011թ. իմ կողմից Կուտական համայնքում կատարված աշխատանքների և բյուջեի կատարման մասին:

Կուտական համայնքում կա 85 տնտեսություն, ապրում են 298 բնակիչ, որոնց 60%-ը փախստականներ են:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մարմինների մասին» և Հայստանի Հանրապետության «Համայնքային ծառայության մասին» օրենքով համայնքի ՏՀ – մարմիններին իրենց գործնեությունը հիմնականում նպատակաուղղվել է համայնքի բնակչության հոգսերի և խնդիրների լուծմանը, համայնքում առկա սոցիալ տնտեսական հիմնախնդիրների բարելավման ուղղությամբ:

2011թ. Կուտական համայնքում ներկրվել էև բնակչությանը ապահովել է գարնանացանով և աշնանացան ցորեն, ինչպես նաև ապահովել ենք մատչելի արժեքով քիմիական պարարտանյութերով և թունաքիմիկատներով կատարվել է համայնքի ղեկավարի և բնակչության աջակցությամբ շուրջ 1300գծ/մ ոռոգման ցանցի մաքրման աշխատանքներ:

Միաժամանակ տեղեկացվում է, որ չնայած կատարված աշխատանքների համայնքում դեռևս կան առկա մի շարք խնդիրներ՝

1.ոռոգման ցանցի վերակառուցում

2.խմելու ջրագծի կառուցում

3.համայնքում չկա մանկապարտեզ

4.համայնքը դեռևս չի գազաֆիկացվել

այս բոլոր խնդիրների լուծման համար գյուղապետարանը չունի ֆինանսական միջոցներ, չնայած այն ներառվել է համայնքի սոցիալ – տնտեսական զարգացման քառամյա ծրագրում և ներկայացվել է վերադաս մարմիններին:

2011թ. ընթացքում բնակչության կողմից ստացվել է 27 դիմում տարբեր բնույթի և տեսակի, որոնց տրվել է մասնակի ելնելով համայնքի բյուջեի հնարավորությունից:

2011թ. ընթացքում կատարվել է ավագանու 9 նիստ համայնքի բնակչությունը հիմնականում զբաղված է գյուղատնտեսությամբ և անասնապահությամբ:

Կուտականի գյուղապետարանի աշխատակազմը բաղկացած է 7 հոգուց, իսկ համայնքի ավագանին բաղկացած է 5 անդամից:

Համայնքի վարչական տարածքը 26.2hա է, որից վարելահող-1238.4hա, արոտ -1027.30, խոտարք -       , տնամերձ – 34.0hա, սեփականաշնորհված - 520hա վարելահող:

2011թ. համայնքի բյուջեի սեփական եկամտային մաը կազմում է 9389.0 հազար դրամ, որի հավաքագրումը գյուղապետարանի կողմից կատարվել է 77.3%-ով:

Բյուջեն ըստ սեփական եկամուտների մասի հետևյալն է

| N | եկամուտների անվանումը | Նախատեսված | Փաստացի կատարված | կատարման % |
|---|---|---|---|---|
| 1 | Հողի հարկ | 3811.7 | 3193.2 | 83.8 |
| 2 | Գույքահարկ | 90.0 | 13.3 | 14.7 |
| 3 | վարձավճար | 5321.81 | 3891.2 | 73.1 |
| 4 | արոտի վարձ | - | - | - |
|  | խոտհարքի վարձ | 161.5 | 161.5 | 100.0 |
|  |  |  |  |  |
|  |  |  |  |  |

Բյուջեի ծախսերը ըստ հոդվածների

1.Աշխատավարձ – 8626 հազար դրամ

2.Սոց հատկացում – 961.2 հազար դրամ

Կուտական համայնքի ղեկավար՝ Ա. Աբրահամյան